# Գ<u>ՆԱՌԱՋԱՐԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ԳՆՀ)</u>

## Գնանշում աշխատանքների համար

**Ծրագիր՝** Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող, ԵՄ-ն հայկական համայնքներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի համար ծրագիր, Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգիաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում միջոցառում;

**Ֆինանսավորման աղբյուրը՝** ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (ԳԴՀ ՏՀԶՆ) ֆինանսական աջակցությամբ;

Պայմանագիր՝ *Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի համայնքների 20 տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, GIZ/ESF/NS-2024/002 (2 Լոտով)*

**Հրավերի ամսաթիվ՝** 04 դեկտեմբերի 2024թ.

Հարգելի Հայտատու՝

1. Էներգախնայողության աջակցման հիմնադրամը (Պատվիրատու), սույնով հրավիրում է Ձեզ ներկայացնել Գնառաջարկ հետևյալ աշխատանքների համար.

**Լոտ 1. Տավուշի և Լոռու մարզային համայնքների տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, GIZ/ESF/NS-2024/002 -1;**

**Լոտ 2. Գեղարքունիքի մարզային համայնքների տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, GIZ/ESF/NS-2024/002 -2;**

2. Ձեր Գնառաջարկի պատրաստմանն օժանդակելու նպատակով մենք կցում ենք անհրաժեշտ մասնագրերը, գործառնությունների ցանկը, սխեմաները, Գնառաջարկի ներկայացման և Պայմանագրի նախագծի ձևերը:

Դուք պետք է ներկայացնեք Գնառաջարկ էլեկտրոնային ֆորմատով՝ Առաջարկի ձևի հետ միասին: <u>*Ստացող՝ Աստղինե Պասոյան: Էլ.փոստ:*</u> <u>info@esfarmenia.org</u>

*3.* Դուք որպես գլխավոր կապալառու պետք է ունենաք սույն հրավերում ներառված աշխատանքներին համարժեք, նմանատիպ բնույթի և բարդության առնվազն 1 (մեկ) շինարարական աշխատանքի փորձ վերջին 3 (երեք) տարիների ընթացքում և ներկայացնեք աշխատանքների բարեհաջող ավարտի համար բավարար ֆինանսական միջոցների վկայություն:

4. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել *միայն մեկ* Գնառաջարկ կամ առանձին, կամ որպես համատեղ ձեռնարկատիրական գործունեության (ՀՁԳ) /Կոնսորցիումի/ գործընկեր: Բոլոր Գնառաջարկները, որոնք կներկայացվեն այս կարգի խախտումով, կմերժվեն: ՀՁ գործընկերները համատեղ և յուրաքանչյուրն առանձին առանձին պատասխանատու են պայմանագրի կատարման համար: ՀՁԳ-ի դեպքում առաջատար գործընկերը պետք է ներկայացնի վերոնշյալ 3-րդ կետով պահանջվող փորձը: ՀՁԳ-ի բոլոր

գործընկերների ֆինանսական միջոցները կգումարվեն՝ դրանց բավարար լինելը գնահատելու նպատակով:

5. Գնառաջարկների գնահատման ընթացքում Պատվիրատուն կորոշի յուրաքանչյուր Գնառաջարկի գնահատված գինը՝ թվաբանական սխալների ուղղումներ կատարելու միջոցով ճշգրտելով Գնառաջարկը, առաջնորդվելով հետևյալով.

   ա) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն բառերով և թվերով գումարների միջև, կգերակայի բառերով գրվածը,

   բ) այնտեղ, որտեղ կա անհամապատասխանություն միավորի արժեքի և ընդամենի միջև, կգերակայի միավորի արժեքը,

   գ) եթե Կապալառուն հրաժարվի ընդունել ուղղումները, նրա Գնառաջարկը կմերժվի:

6. Ձեր Գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի *քառասունհինգօրյա (45) ժամկետում*՝ հաշված Գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:

7. Ձեր Գնառաջարկը Հայերեն լեզվով պետք է ներկայացվի բոլոր աշխատանքների համար և հիմնված լինի Միանվագ Գումարով պայմանագրի համար Առաջարկի ձևում և Գործառնությունների Ցանկում նշված ընդհանուր գնի վրա: Առաջարկված գների և վճարումների արժույթը ***հայկական դրամն է:*** Գնառաջարկը պետք է ներառի տեղական օրենսդրությամբ նախատեսված՝ կապալառուի կողմից վճարման ենթակա բոլոր հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները*:

8. Պատվիրատուն կշնորհի պայմանագիրն այն Կապալառուին, որի Գնառաջարկը որոշվել է որպես սույն հրավերին ըստ էության համապատասխանող, և որի Գնառաջարկը նվազագույն գնահատվածն է:

9. Այն Կապալառուն, որը վավերության ժամկետում ետ կվերցնի իր Գնառաջարկը, և/կամ պայմանագրի շնորհման դեպքում կհրաժարվի ընդունել պայմանագրի շնորհումը, կհանվի ծրագրի կապալառուների ցանկից երկու տարի ժամկետով:

10. Պայմանագիրը կկառավարվի կից Պայմանագրի նախագծի պայմաններով ու դրույթներով:

**Հայտը ներկայացնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սույն ծրագրի շրջանակներում ձեռք բերվող ապրանքները, աշխատանքները և մատուցվող ծառայություններն ազատված են ԱՄՀ-ից և մաքսատուրքից:*

11. Ձեր Գնառաջարկը պետք է ներկայացվի մինչև 2024թ. դեկտեմբերի 18-ը, ժամը 15:00: Գնառաջարկները կբացվեն հրապարակավ՝ 2024թ. դեկտեմբերի 18-ը, ժամը 15:00-ին, այն կապալառուների/հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր նախընտրել են ներկա գտնվել հետևյալ հասցեում.

***ՀՀ, ք. Երևան, 26/1 Վազգեն Սարգսյան փողոց, Էրեբունի Պլազա, գր. 414:***

Հարգանքով՝ | Էներգախնայողության աջակցման

Աստղինե Պասոյան | հիմնադրամի գործադիր տնօրեն

# ԲԱԺԻՆ 1 – ՄԱՍՆԱԳՐԵՐ

## Տեխնիկական մասնագրեր

### Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի համայնքների 20 տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, GIZ/ESF/NS-2024/002

Արտաքին պատող կոնստրուկցիաներում կիրառելի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝

**Վերնածածկի / ձեղնահարկի ջերմամեկուսացում՝**

Ա) Փքեցված պեռլիտե ավազով և խճով լցոնված պարկեր [GOST 10832-96], որի ջերմահաղորդականության գործակիցը 0.065-0.072 Վտ/մ՛Կ միջակայքում է, ֆրակցիան ≥ 8 մմ, տեսակարար կշիռը՝ 40 կգ/մա - 140 կգ/մա, այրելիության դասը՝ ≥ Class A1, պարկի հաստությունը՝ 150 մմ
Պարկերի նյութերը պետք է պատրաստված լինեն պոլիէթիլենային թաղանթներից կամ նմանատիպ այլ նյութերից, որոնք դիմակայում են խոնավության ներթափանցմանը:
Հարկավոր է վերնածածկի հատակը նախապես մաքրել առկա շինաղբից և գոյություն ունեցող խարամի շերտից, ստանալով նպատակահարմար մակերևույթ ջերմամեկուսացման աշխատանքները մեկնարկելու համար:

**Արտաքին պատերի ջերմամեկուսացում[1]**

Ա) Փրփրապոլիստիրոլի սալեր, ջերմահաղորդականության գործակիցը≤ 0.040 Վտ/մ՛Կ, տեսակարար կշիռը ≥ 25 կգ/մ3, սեղմման ամրությունը ≥ 0.025 ՄՊա, այրելիության դասը՝ ≥ Class C, նյութի հաստությունը՝ 50 մմ

Բ) Էքստրուդացված պոլիստիրոլի սալեր, ջերմահաղորդականության գործակիցը≤ 0.035 Վտ/մ՛Կ, տեսակարար կշիռը ≥ 25 կգ/մ3, սեղմման ամրությունը ≥ 0.025 ՄՊա, , այրելիության դասը՝ ≥ Class C, նյութի հաստությունը՝ 50 մմ

Գ) Հանքային բամբակ, ջերմահաղորդականության գործակիցը ≤ 0.042 Վտ/մ՛Կ, տեսակարար կշիռը ≥ 110 կգ/մ3 , այրելիության դասը՝ ≥ Class A2, նյութի հաստությունը՝ 50 մմ

Բոլոր տարբերակներում տեղադրման համար պետք է հաշվի առնել էլաստոմերային սոսինձ, ապակյա մանրաթելային ցանցը, պլաստմասե խցաբութակներ և երեսպատման սոսնձաավաղի շերտ և ճակատային դեկորատիվ հարդարանք/ներկում:

**Դռների, պատուհանների և ապակեպատ մակերեսների փոխարինում**

Ա) Պատուհաններ՝ Մետաղապլաստե շրջանակով 60 մմ հաստ., մետաղական ներդիրով (առնվազն 1.2 մմ հաստ.) առնվազն 4 խցիկով, ալյումինե շրջանակով (ներկառուցված ջերմախզիչ միջուկով), երկշերտ ապակեպատվածքով –ջերմափոխանցման արժեքը ≤ 2.08 Վտ/ մ2 ՛Կ

Բ) Դռներ՝ Մետաղապլաստե շրջանակով 60 մմ հաստ., մետաղական ներդիրով (առնվազն 1.2 մմ հաստ.) առնվազն 4 խցիկով, ալյումինե շրջանակով (ներկառուցված ջերմախզիչ միջուկով), մետաղական՝ լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում, ջերմափոխանցման արժեքը ≤ 2.2 Վտ/ մ2 ՛Կ.s

[1] Բոլոր տարբերակներում տեղադրման համար պետք է հաշվի առնել էլաստոմերային սոսինձ, ապակյա մանրաթելային ցանցը, պլաստմասե խցաբութակներ և երեսպատման սոսնձաավաղի շերտ:

## ԲԱԺԻՆ 2 – ԳՆԱՆՇՎԱԾ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Աշխատանքներում ներառված բոլոր նյութերը պետք է լինեն նոր, չօգտագործված, և ներառեն բոլոր նորագույն կատարելագործումները, եթե այլ կերպ չի սահմանվի պայմանագրով:

2. Բոլոր աշխատանքները պետք է կատարվեն քաղաքաշինական նորմերին և ստանդարտներին, ինչպես նաև նմանատիպ աշխատանքների իրականացմանը՝ *ՀՀ* օրենսդրությամբ առաջադրվող այլ պահանջներին համապատասխան:

3. Ցանկը բաղկացած է 20 տնային տնտեսություններից և ռեզերվային տնային տնտեսություններից: Հնարավոր են փոփոխություններ առաջին 20–ի մեջ ռեզերվի հաշվին, եթե առաջանան տեխնիկական կամ համաֆինանսավորման հետ խնդիրներ :

Լոտ1 - Տավուշի և Լոռու
մարզային համայնքների տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, *GIZ/ESF/NS-2024/002 -1*

**Համայնք Վանաձոր /տնային տնտեսություն Ռուդիկ Վարոսյան/**

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր արժեքը/Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 12.1 | | |
| 2 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 1.9 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

**Համայնք Վանաձոր /տնային տնտեսություն Անուշ Սահակյան/**

| հ/հ | Անվանու | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր արժեքը /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 1.9 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով | 3.7 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պատուհաններով | | | |
| 3 | Արտաքին պատերի ջերմամեկուսացում /դրսից/ 50 մմ էստրոդացված պոլիստիրոլի սալերով | 80 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

**Համայնք Թումանյան/Չկալով /տնային տնտեսություն Ջվարթ Բալայան/**

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 1.7 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 8.8 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

**Համայնք Ալավերդի/Քարկոփ /տնային տնտեսություն Գագիկ Միրադեղյան/**

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 3.8 | | |
| 2 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 123 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Համայնք Ալավերդի/Օձուն /տնային տնտեսություն Ամրաստան Ջանինյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 2.5 | | |
| 2 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում էքստրուդացված պոլիստիրոլի սալերով (50 մմ հաստ.), որի վրա իրականացվում է ամրանավարված (вр 5, 50x50 մմ) ցեմենտավազային հարթեցուցիչ շերտ | 170 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Համայնք Ալավերդի/Օձուն /տնային տնտեսություն Թագուն Մանուկյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 132 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 15 | | |
| 3 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 3.25 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

### Համայնք Ալավերդի /տնային տնտեսություն Գագիկ Ադամյան/

| հ/ հ | Անվանում | Քանակ ը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 45 | | |
| 2 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 5 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

### Համայնք Նոյեմբերյան /տնային տնտեսություն Հայկ Մամյան/

| հ/ հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 105 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 11.7 | | |
| 3 | Պատշգամբի դռան փոխարինում, մետաղապլաստե շրջանակով 60 մմ հաստ., երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում, | 1.6 | | |
| 4 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 2.1 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Համայնք Նոյեմբերյան /տնային տնտեսություն Ալինա Բեգլարյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 105 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 22 | | |
| 3 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 1.6 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Համայնք Նոյեմբերյան /տնային տնտեսություն Ասյա Ցարալյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 142 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 15.2 | | |
| 3 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 5 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Համայնք Նոյեմբերյան /տնային տնտեսություն Վիոլետա Ղարախանյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 28 | | |
| 2 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 2,8 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

**Համայնք Բագրատաշեն /տնային տնտեսություն Ռազմիկ Մովսեսյան/**

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 15 | | |
| 2 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 1.9 | | |
| 3 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 142 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

**Համայնք Բագրատաշեն /տնային տնտեսություն Թամարա Դանիելյան/**

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 6.5 | | |
| 2 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 1.9 | | |
| 3 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 91 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Համայնք Սոքար /տնային տնտեսություն Արմեն Պետրոսյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 6.3 | | |
| 2 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 1.9 | | |
| 3 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 208 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Լիազորված անձի ստորագրություն /կնիք/

Լոտ 2 - Գեղարքունիքի մարզի համայնքների տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, GIZ/ESF/NS-2024/002-2

Համայնք Դդմաշեն /տնային տնտեսություն Բորիս Հակոբյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Տանիքի/առաստաղի ջերմամեկուսացում (ներսից), 50 մմ հաստությամբ էքստրուդացված պոլիստիրոլի սալերով, ծածկելով այն 9.5 մմ հաստության գիպսաստվարաթղթե շերտով, ներառյալ ալյումինե կարկասը, ծեփամածկումը և ներկումը | 20 | | |
| 2 | Արտաքին պատերի ջերմամեկուսացում (ներսից), 50 մմ հաստությամբ էքստրուդացված պոլիստիրոլի սալերով, ծածկելով այն 9.5 մմ հաստության գիպսաստվարաթղթե շերտով, ներառյալ ալյումինե կարկասը, ծեփամածկումը և ներկումը | 25.5 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

**Համայնք Դղմաշեն /տնային տնտեսություն Համլետ Հայրապետյան/**

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 1.6 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 2.2 | | |
| 3 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 24.5 | | |
| 4 | Արտաքին պատերի ջերմամեկուսացում (դրսից), 50 մմ հաստությամբ էքստրուդացված պոլիստիրոլի սալերով, ներռյալ սոսնձաավաղային շերտի իրականացումը ներկառուցված ապակեթելքային ցանցը և ճակատային հարդարումը (ճակատային ծեփամածկում և ներկում) | 50.5 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

**Համայնք Դղմաշեն /տնային տնտեսություն Անահիտ Մովսիսյան/**

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Պատշգամբի դռան ջերմամեկուսացում փոխարինում,/մետաղապլաստե շրջանակով 60 մմ հաստ., երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում, | 2.7 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 8.5 | | |
| 3 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ | 175 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

## Համայնք Դդմաշեն /տնային տնտեսություն Նաթելլա Ղազարյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 3 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 14.3 | | |
| 3 | 200մմ հաստությամբ պատերի ջերմամեկուսացում, 50 մմ հաստությամբ էքստրուդացված պոլիստիրոլի սալերով, ներռյալ սոսնձաավաղային շերտի իրականացումը ներկառուցված ապակեթելքային ցանցը և ճակատային հարդարումը (ճակատային ծեփամածկում և ներկում) | 22 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

## Համայնք Դդմաշեն /տնային տնտեսություն Մարտին Փանոսյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/ պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 2.6 | | |
| 2 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ Տանիքի ջերմամեկուսացում | 182 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Համայնք Դդմաշեն /տնային տնտեսություն Սեդա Տոնոյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/ պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 1.9 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 15.5 | | |
| 3 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ Տանիքի ջերմամեկուսացում | 180 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Համայնք Դդմաշեն /տնային տնտեսություն Մնացական Վարդանյան/

| հ/հ | Անվանում | Քանակը (մ2) | Միավոր արժեքը /Դրամ/ | Ընդհանուր Գին /Դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Մուտքի դռան փոխարինում՝ մետաղական շրջանակով դռնով, լցոնված պոլիստիրոլային/ պոլիուրետանային ջերմամեկուսիչով, երկշերտ ապակեպատվածքով թափանցիկ հատվածներում | 2.1 | | |
| 2 | Պատուհանների փոխարինում մետաղապլաստե շրջանակով երկշերտ ապակեպատվածքով պատուհաններով | 16.2 | | |
| 3 | Տանիքի/ձեղնահարկի ջերմամեկուսացում փքեցված պեռլիտի ավազով և խճով լցոնված պարկերի տեղադրմամբ Տանիքի ջերմամեկուսացում | 122 | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | |
| ԱԱՀ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ /ներառյալ ԱԱՀ/ | | | | |

Լիազորված անձի ստորագրություն /կնիք/

## Բաժին 3 - Իրականացման տեխնիկական առաջադրանք

## Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի համայնքների 20 տնային տնտեսություններում ջերմ ամեկուսացման աշխատանքների իրականացում

### Արտարին պատերի ջերմամեկուսացում

Հետազոտել տների բոլոր պատերի մակերևույթները և իրականացնել էներգախնայողության նպատակով արտաքին պատերի ջերմամեկուսացման աշխատանքները: Նախատեսել ճակատային հարդարման աշխատանքներ:

### Արտաքին պատուհանների, մուտքի և պատշգամբի դռների փոխարինումը

Հետազոտել տների բոլոր ապակեպատ մակերեսները, մուտքի և պատշգամբի դռները և փոխարինել ոչ պիտանի արտաքին պատուհանները և դռները երկտակ արդյունավետ միավորներով, համաձայն ներկայացված քանակների, հաշվի առնելով պատուհանների և դռների բացվածքների չափսերի հնարավոր հարմարեցումները:

### Տանիքի ջերմամեկուսացում

Ուսումնասիրել տների տանիքի/ձեղնահարկի առկա վիճակը և իրականացնել այդ տարրի ջերմամեկուսացման աշխատանքներ՝ համաձայն ներկայացված լուծումների:

## ԲԱԺԻՆ 5 – ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՄԻԱՎՈՐ ԳՆԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԵՄ-ն հայկական համայնքներում էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի համար», «Փոքր մասշտաբի վերականգնվող էներգիայի և էներգիաարդյունավետության միջոցառումներ հանրային շենքերում և պիլոտային մեկուսացում տնային տնտեսությունների մակարդակում» ծրագիր

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի համայնքների 20 տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում

Պայմանագրի համար՝ GIZ/ESF/NS-2024/002

Լոտ 1. Տավուշի և Լոռու մարզային համայնքների տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, GIZ/ESF/NS-2024/002 -1;

Լոտ 2. Գեղարքունիքի մարզային համայնքների տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, GIZ/ESF/NS-2024/002 -2;

Սույն պայմանագիրը կնքվել է 2024թ. -ին, Էներգախնայողության աջակցման հիմնադրամի ՝ մի կողմից (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________ (այսուհետ՝ Կապալառու) մյուս կողմից միջև:

Քանի որ Պատվիրատուն հրավիրել էր ներկայացնել Գնառաջարկներ Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի համայնքների 20 տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում (GIZ/ESF/NS-2024/002) և Կապալառուն ներկայացրել է Գնառաջարկ այդ աշխատանքների համար, և Պատվիրատուն ընդունել է այդ աշխատանքների իրականացման և դրա ցանկացած թերության վերացման համար Կապալառուի …………………. թվագրությամբ Գնառաջարկը.

Այժմ սույն պայմանագիրը հավաստում է.

1.Այսուհետև Կապալառուն պարտավորվում է Գնառաջարկում ընդգրկված, սույն պայմանագրի մասը կազմող Գնանշված ծավալների ցանկով սահմանված աշխատանքներն իրականացնել ամբողջովին, մասնագիտական հմտությամբ և վարպետությամբ՝ պայմանագրի հետևյալ պայմաններին համապատասխան.

1.1.Տեխնիկական հսկողություն իրականացնող խորհրդատուի կողմից ծանուցում ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում վերացնել պայմանագրի կատարման ընթացքում և դրանից հետո թերությունների համար պատասխանատվության ժամկետում ի հայտ եկած բոլոր թերությունները:

1.2.Պատվիրատուն իրավունք ունի աշխատանքների անբավարար կատարման դեպքում, գրավոր ծանուցումից հետո՝ 21 օրվա ընթացքում լուծել պայմանագիրը: Եթե

պայմանագիրը լուծվում է պատերազմի կամ Պատվիրատուի և Կապալառուի վերահսկողությունից ամբողջովին դուրս այլ իրադարձության պատճառով, Պատասխանատու ինժեները պետք է հաստատի, որ պայմանագիրը դադարեցված է: Այդպիսի դեպքերում, թե Պատվիրատուն, թե Կապալառուն իրավունք ունեն լուծել պայմանագիրը՝ մյուս կողմին 30 օրվա ծանուցումից հետո, առանց կողմերի վրա որևէ ֆինանսական ազդեցության:

1.2.1.Պայմանագրի պայմանների այլ էական խախտումների դեպքում Պատվիրատուն կամ Կապալառուն կարող են լուծել Պայմանագիրը: Չսահմանափակվելով ներքոնշյալով, Պայմանագրի էական խախտումները ներառում են հետևյալ դեպքերը՝ Պատվիրատուն կարող է լուծել Պայմանագիրը եթե՝

ա/ Կապալառուն /10/ տասնօրյա ժամկետով դադարեցնում է աշխատանքի իրականացումն այն դեպքում, երբ դադարեցումը հրահանգված չէ Պատասխանատու ինժեների կողմից,

բ/ Տեխնիկական հսկողություն իրականացնող խորհրդատուն ծանուցում է, որ Կապալառուն Տեխնիկական հսկողություն իրականացնող խորհրդատուի կողմից սահմանված 15 օրվա ընթացքում չի շտկել ի հայտ եկած թերությունը,

գ/ Կապալառուն ուշացրել է Աշխատանքների ավարտն այնքան օրերով, որոնց դեպքում գնահատված վնասի համար վճարվող առավելագույն գումարը գերազանցում է 1.2.3 կետով սահմանված 10 (տասը) տոկոսի չափը:

դ/ Կապալառուն կարող է լուծել Պայմանագիրը, եթե Պատասխանատու ինժեների կողմից հաստատված կատարողականի վճարումը Պատվիրատուի կողմից չի իրականացվում Կապալառուին՝ Պատասխանատու ինժեների կողմից կատարողականի տրման ժամկետից 30 /երեսուն/ օրվա ընթացքում:

1.2.2.Անկախ վերոնշյալ դեպքերից, Պատվիրատուն իր հայեցողությամբ կարող է լուծել Պայմանագիրը՝ երեսուն /30/ օր առաջ գրավոր ծանուցելով Կապալառուին: Պայմանագրի լուծումից հետո Կապալառուն պետք է անմիջապես դադարեցնի աշխատանքները, ապահովի շինհրապարակի անվտանգությունը և ծանուցման օրվանից տասնհինգ /15/ օրվա ընթացքում ազատի շինհրապարակը: Այս դեպքում Պատվիրատուն պետք է վճարի պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ կատարված աշխատանքների համար:

1.2.3.Եթե Կապալառուն ուշացնում է Պայմանագրում նշված ժամկետների շրջանակներում աշխատանքների իրականացումը, ապա Պատվիրատուն պետք է պահի Պայմանագրի Գումարից որպես գնահատված վնասներ օրական 0.05 տոկոսի չափով գումար՝ ամեն ուշացված օրվա համար՝ մինչև փաստացի ավարտը, առավելագույնը Պայմանագրի Գումարի 10 տոկոսի չափով: Երբ պահումը հասնում է առավելագույնին, Պատվիրատուն կարող է լուծել Պայմանագիրը՝ համաձայն 1.2.1 կետի գ/ ենթակետի:

1.3. Տեղամասում գտնվող բոլոր նյութերն ու շինարարական տեխնիկան, միջանկյալ աշխատանքները և Գործառնությունները կհամարվեն Պատվիրատուի սեփականությունը, եթե պայմանագիրը դադարեցվել է Կապալառուի մեղքով:

1.4.Կապալառուն պետք է բոլոր դեպքերում հետևի Պատասխանատու ինժեների հրահանգներին:

1.5. Կապալառուն պետք է պայմանագրի ստորագրումից հետո 7 օրվա ընթացքում Պատասխանատու ինժեներին ներկայացնի աշխատանքների ավարտման ընդհանուր մեթոդները և ժամանակացույցը ներկայացնող ծրագիր:

1.6 Պայմանագրի ավարտի ժամկետն է՝ պայմանագրի ստորագրումից հետո **1,5 ամիս**:

1.7. Ծավալների փոփոխության դեպքում Պատասխանատու ինժեների հրահանգով իրականացված աշխատանքների նոր միավորի համար կվճարվի փոխադարձ համաձայնեցված գնով, իսկ Կապալառուի և Պատասխանատու ինժեների միջև անհամաձայնության դեպքում վերջինս Կապալառուի համար պարտադիր գին կսահմանի:

1.8. Պայմանագրի կարգավորող օրենսդրությունը ՀՀ գործող օրենսդրությունն է:

1.9.Կապալառուն պետք է պատասխանատու լինի շինհրապարակի բոլոր գործառնությունների անվտանգության համար:

1.10. Աշխատանքների կատարման ընթացքում Պատասխանատու ինժեները (**Ազգանուն Անուն**) պետք է ստուգի շինհրապարակում աշխատանքները՝ համոզվելու, որ աշխատանքները Կապալառուի կողմից կատարվել են մասնագրերին և մասնագրերով պահանջվող որակին համապատասխան: Պատասխանատու ինժեները կմերժի այն աշխատանքները, որոնք չեն կատարվել պահանջվող մասնագրերին համապատասխան և Կապալառուն անմիջական գործողություններ կձեռնարկի վերացնելու բոլոր թերությունները՝ համաձայն 1.1 կետի:

1.11. Կողմերից յուրաքանչյուրը անկանխատեսելի իրադարձությունների դեպքում, այն է՝ պատերազմ կամ այլ տարերային աղետներ (երկրաշարժ, հրդեհ, ջրհեղեղ և այլն), կարող է դադարեցնել պայմանագիրը՝ 30 օր առաջ ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքերում վճարումը պետք է կատարվի պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ:

1.12. Կապալառուն պատասխանատու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերի, տուրքերի և այլ վճարների համար:

1.13. Պայմանագրի գինը ենթակա չէ վերանայման, բացառությամբ 1.7 կետով նախատեսված դեպքերի:

1.14. Պատվիրատուի և Կապալառուի միջև պայմանագրի հետ կապված վեճերը պետք է լուծվեն բանակցությունների միջոցով: Եթե դրանից հետո վեճը մնում է չլուծված, ապա ցանկացած կողմը կարող է դիմել դատարան համաձայն պայմանագիրը կարգավորող օրենսդրության:

1.15. Բոլոր գործառնությունների ավարտից հետո Կապալառուն պարտավոր է վերականգնել տեղամասի նախկին վիճակը, ներառյալ աղբի, ապամոնտաժված սարքավորումների և նյութերի հեռացումը:

1.16. Աշխատանքների ավարտից հետո Կապալառուն պատասխանատու է օբյեկտը ավարտված շինարարական աշխատանքների շահագործման փաստագրման կարգի համաձայն հանձնելու համար:

1.17. Կապալառուն պետք է կատարի բնապահպանական ազդեցության նվազեցման պահանջները, ինչպես նաև ձեռնարկի առողջությանը և անվտանգությանն առնչվող որոշակի գործողություններ՝ նվազագույնի հասցնելու շինարարական և ետշինարարական ժամանակահատվածի պատահարները: Հատկապես

ուշադրություն պետք է դարձվի նոր շինարարական աշխատանքներում ոչ վտանգավոր նյութերի օգտագործմանը /օրինակ, ասբեստ պարունակող նյութերի սահմանափակ և կանոնակարգված օգտագործումը արգելված է/:

Վերոնշյալը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.

- *շինարարական աղբի տեղափոխում աղբավայրեր,*
- *բնապահպանական և առողջապահական առումով անվտանգ շինանյութերի օգտագործման նկատմամբ խիստ հսկողություն,*
- *աղմուկի նվազեցման միջոցառումներ,*
- *տնային տնտեսությունների և շահառուների, ինչպես նաև աշխատողների անվտանգության և առողջապահական պահանջների խստիվ պահպանում,*

2. Հաշվի առնելով վերոնշյալը Պատվիրատուն պարտավորվում է Կապալառուին վճարել -------------------------------------------(բառերով և թվերով) /ներառյալ բոլոր հարկերը/ ՀՀԴ պայմանագրի գինը, հետևյալ կերպ.

2.1 Պատվիրատուն, Կապալառուին յուրաքանչյուր վճարումից պետք է կատարի տասը տոկոսի համամասնությամբ պահում՝ մինչև բոլոր աշխատանքների կատարման ավարտը:

2.2 Կանխավճար՝ պայմանագրի գնի 20 տոկոսի չափով, որը կվճարվի Կապալառուի կողմից Կանխավճարի բանկային երաշխիքի դիմաց:

2.3 Հաջորդող բոլոր վճարումները կկատարվեն նվազագույնը համապատասխան ցանկացած տնային տնտեսության ***Գնանշված ծավալների ցանկում*** նշված ավարտված տողի/աշխատանքի տեսակի համար: Յուրաքանչյուր հերթական վճարում կիրականացվի ավարտված տողի/աշխատանքի տեսակի համար՝ հաշվի և կատարողականի ներկայացումից և հաստատումից հետո՝ 21 օրվա ընթացքում:

2.4 Բոլոր աշխատանքների ավարտից հետո Պատվիրատուն յուրաքանչյուր վճարումից պահված գումարի կեսը կվճարվի Կապալառուին, իսկ մյուս կեսը կվճարվի Թերությունների համար պատասխանատվության ժամկետի ավարտից հետո, մեկ ամսվա ընթացքում եթե Պատասխանատու ինժեները հավաստի, որ իր կողմից Կապալառուին տեղեկացրած բոլոր թերությունները վերոհիշյալ ժամկետում վերացված են: Բոլոր աշխատանքների ավարտից հետո Կապալառուն կարող է պահված գումարը փոխարինել «ըստ պահանջի» բանկային երաշխիքով մինչև Թերությունների համար պատասխանատվության ժամկետի ավարտը:

2.5 Թերությունների համար պատասխանատվության ժամկետ է սահմանվում՝ Ավարտման վկայագրի հաստատումից հետո 365 օր:

Ի վկայություն վերոհիշյալի, կողմերը պարտավորվում են կատարել սույն Պայմանագիրը նշված ժամկետում:

Պատվիրատուի կողմից

Էներգախնայողության աջակցման հիմնադրամ

ՀՎՀՀ 00081855

Հեռ: + 374 93 61 16 19

ՀՀ, ք. Երևան, Էրեբունի Պլազա, գր. 414

Էլ.փոստ: apasoyan@esfarmenia.org

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ,

Հ/հ 2051722064301001

-----------------------------------------------

Աստղինե Պասոյան

Գործադիր տնօրեն

Կապալառուի կողմից

-----------------------------------------------

Տնօրեն

## ԲԱԺԻՆ 6 - ԳՆԱՌԱՋԱՐԿ

03 դեկտեմբերի 2024թ.

Էներգախնայողության աջակցման հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Էրեբունի Պլազա, գր. 414

_______________________________________

Մենք առաջարկում ենք իրականացնել

**Լոտ 1. Տավուշի և Լոռու մարզային համայնքների տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, GIZ/ESF/NS-2024/002 -1;**

**Լոտ 2. Գեղարքունիքի մարզային համայնքների տնային տնտեսություններում ջերմամեկուսացման աշխատանքների իրականացում, GIZ/ESF/NS-2024/002 -2;**

աշխատանքները, համաձայն սույն Հրավերին կցված պայմանագրի պայմաններին (________________________________) ՀՀ դրամ /ներառյալ բոլոր հարկերը/ պայմանագրային գումարով:

Մենք առաջարկում ենք ավարտել պայմանագրով նախատեսված բոլոր աշխատանքները պայմանագրի ստորագրման օրվանից …… * ամսվա ընթացքում:

Սույն Գնառաջարկը և Ձեր գրավոր ընդունումը կհանդիսանա մեր միջև պարտադիր ուժ ունեցող պայմանագիր: Մենք հասկանում ենք, որ Դուք պարտադրված չեք ընդունել ամենացածր գին ունեցող կամ Ձեր կողմից ստացված որևէ այլ Գնառաջարկ:

Սույնով մենք հաստատում ենք, որ մեր Գնառաջարկը համապատասխանում է հրավերի փաստաթղթերի առաջարկի վավերության պահանջներին:

Լիազորված ստորագրություն /կնիք/

Ստորագրողի անունը և պաշտոնը

Կապալառուի անվանումը

Հասցեն

Հեռախոսի համարը

* Կապալառուն պարտադիր պետք է նշի իրականացվող աշխատանքների կատարման ժամկետը

# ԲԱԺԻՆ 7 - ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

*[Երաշխավորի բլանկ]*

**Շահառու՝ Էներգախնայողության աջակցման հիմնադրամ**

**Ամսաթիվ՝**

**ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԵՐԱՇԽԻՔ No.**

**Երաշխավորող.** *[թողարկողի անունը, հասցեն և վայրը՝ եթե նշված չէ բլանկի վրա]*

Մեզ տեղեկացրել են, որ ___________________ [*Կապալառուի անունը (համատեղ գործունեության դեպքում պետք է լինի համատեղ գործունեության անվանումը*] (այսուհետ՝ «Հայտատու») [*ամսաթիվ*] Շահառուի հետ կնքել է [*պայմանագրի համարը*] Պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») [*Աշխատանքների հակիրճ նկարագրությունը*] աշխատանքները կատարելու համար:

Բացի այդ, մենք գիտենք, որ համաձայն Պայմանագրի պայմանների, պետք է վճարվի [*գումարը բառերով և թվերով*] կանխավճար՝ կանխավճարի երաշխիքի դիմաց:

Հայտատուի խնդրանքով մենք՝ [*Բանկի անվանումը*], հանդիսանալով երաշխավոր, սույնով պարտավորվում ենք՝ Շահառուի գրավոր պահանջը ստանալուն պես, անվերապահորեն Շահառուին վճարել ցանկացած գումար կամ գումարներ, որոնց հանրագումարը չի գերազանցում __________________________[1], [*գումարը թվերով և տառերով*] եթե այդ պահանջի հետ մեկտեղ մեզ ներկայացվի նաև գրավոր ծանուցում, որով կսահմանվի, որ Հայտատուն

(ա) օգտագործել է կանխավճարը ոչ Աշխատանքները մոբիլիզացնելու ծախսերի համար, կամ

(բ) չի մարել կանխավճարը Պայմանագրի դրույթների համաձայն՝ նշելով Հայտատուի կողմից չմարված գումարը:

Ցանկացած պահանջ սույն Երաշխիքի շրջանակներում կարող է ներկայացվել Երաշխավորողին՝ Շահառուի բանկի կողմից տրված վճարման վկայագրի հետ միասին, որը կհաստատի, որ Կանխավճարը փոխանցվել է Հայտատուի թիվ _______ /նշել հաշվի համարը/ բանկային հաշվն, որը սպասարկվում է __________________ /նշել բանկի անվանումը և հասցեն/ կողմից:

Սույն երաշխիքով սահմանված առավելագույն գումարն աճողաբար կնվազեցվի այն գումարի չափով, որքանով Հայտատուն կմարի կանխավճարը՝ համաձայն միջանկյալ վճարման հայտարարագրերի կամ վկայագրերի, որոնց պատճենները կներկայացվեն մեզ:

Երաշխիքը կդադարի գործել ամենաուշը կամ մեր կողմից աշխատանքների ընդունման վճարման վկայագիրը ստանալուն պես, որում նշված կլինի վճարման համար վկայագրված է Պայմանագրի ընդունված գումարի իննսուն (90) տոկոսը՝ հանած պայմանական գումարները, կամ [ամսաթիվը], [2] որը որ լինի ավելի վաղ:

Համապատասխանաբար, սույն Երաշխիքի շրջանակներում ցանկացած վճարման պահանջ բանկի գրասենյակ պետք է ներկայացվի վերոնշյալ ամսաթվից ոչ ուշ:

Սույն Երաշխիքը կարգավորվում է «Uniform Rules for Demand Guarantees (URDG) 2010 Revision, ICC Publication No. 758» դրույթների և պահանջների համաձայն, բացառությամբ հոդված 15(a)-ի օժանդակ հայտարարության: [*Բանկի կնիքը և ստորագրությունները*]

---

[1] *Երաշխավորը պետք է նշի Երաշխիքի գումարը Պայմանագրի արժույթով՝ որը սահմանված է Պայմանագրով:*

[2] *Նշեք ավարտման ակնկալվող ամսաթիվը:*